Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-828[1]-29.12.2020,12.04.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» 1998 թվականի մայիսի 5-ի թիվ ՀՕ-221 օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետում «ճանաչել» բառից հետո լրացնել «, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերը:

Հոդված 2. . Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» 1998 թվականի մայիսի 5-ի թիվ ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 4-րդ կետում լրացնել նոր պարբերություն.~~

~~«Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված կատարողական վարույթները սույն կետի հիմքով կասեցման ենթակա չեն:»:~~

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» 1998 թվականի մայիսի 5-ի թիվ ՀՕ-221 օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետում «ճանաչել» բառից հետո լրացնել «, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերը:

Հոդված 2. ~~Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը լրացնել նոր պարբերություն.~~

~~«Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված կատարողական վարույթները սույն կետի հիմքով կարճման ենթակա չեն:»:~~

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-828-29.12.2020,09.04.2021-ՊԻ-011/1) ԵՎ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-828[1]-29.12.2020,09.04.2021-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի Որոշումը
1.	Կառավարություն	««Սնանկության մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ 1 հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «կարճվում են» բառերը փոխարինել «կարճվում է» բառերով, «բռնագանձումներով» բառից հետո «և» շաղկապը փոխարինել «կամ» շաղկապով, «որոնք չեն ազդում» բառերը փոխարինել «որն ազդում է» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	««Սնանկության մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ 2 հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում «բռնագանձումներով» բառից հետո «և» շաղկապը փոխարինել «կամ» շաղկապով, «որոնք չեն ազդում» բառերը փոխարինել «որն ազդում է» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն	««Սնանկության մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ 3 հոդված	Նախագծի 3-րդ հոդվածը փոփոխել հետևյալ պարբերությամբ. «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում «ծագած և» բառերից հետո լրացնել «սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ» բառերը և լրացնել նոր՝ 2-րդ նախադասություն. «Սույն մասով սահմանված՝ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճը ենթակա է քննության	Ընդունվել է	Ընդունվել է

			սնանկության դատարանում որպես առանձին քաղաքացիական գործ անկախ պարտապանի՝ սնանկ ճանաչված լինելու հանգամանքից:»:		
3.	Կառավարություն	««Սնանկության մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ 4 հոդված	«Նախագծում լրացնել 4-րդ հոդված հետևյալ պարբերությամբ. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը»:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ 1 հոդված	«Նախագծի 1-ին հոդվածը փոփոխել հետևյալ պարբերությամբ. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» 1998 թվականի մայիսի 5-ի թիվ ՀՕ-221 օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետում «Ճանաչել» բառից հետո լրացնել «, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերը:»:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Կառավարություն	««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ 2 հոդված	«Նախագծի 2-րդ հոդվածը փոփոխել հետևյալ պարբերությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	Կառավարություն	««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ 3 հոդված	«Նախագծի 3-րդ հոդվածը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է